ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

DOI 10.57192/18291864-2025.1-41

Տիգրան Մ. Պետրոսյանց
tigranhayazn@mail.ru
orcid: 0000-0001-6946-1137

Հրաչյա Տ. Պետրոսյանց
petrosyants.hrachya@gmail.com
orcid: 0009-0001-9033-0403

ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

Ամփոփում

XII դարի վերջին տասնամյակում և XIII դարի առաջին տասնամյակում Հայաստանի փաստացի անկախությունը վերականգնած շահնշահ Զաքարե Երկրորդ Զաքարյանը իր հիմնած Հայաստան-Հայքի թագավորությունում իրականացրել է վարչատարածքային բարեփոխումներ և երկրի ներսում ստեղծված առանձին վարչական միավորներին տվել **կողմնակալություն,** դրանց ղեկավարներին՝ **կողմնակալ**անունները՝ նրանց շնորհելով **իշխանաց իշխանի** աստիճան-կոչում: Այս վարչատարածքային միավորները, լինելով XIII դարի պատմաքաղաքական իրավիճակի արգասիք, ամբողջովին արտացոլում էին երկրի ղեկավարի պետություն կերտելու մոտեցումները: Թեև այդ ժամանակի հայկական իրականության մեջ դրանք նոր երևույթ էին, այնուամենայնիվ ունեին իրենց պատմական նախադեպերը:

Բանալի բառեր – Զաքարյաններ, շահնշահ Զաքարե Բ Զաքարյան, Իվանե Ա Զաքարյան, բդեշխ, կուսակալ, պետականության վերականգնում, կողմնակալություն, կողմնակալ, Վահրամյաններ, Թմոգվեցիներ, Վաչուտյաններ, Դոփյաններ, Խաղբակյան-Պռոշյաններ, Օրբելյաններ, Հասան Ջալալ Դոլո:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 23. 02.2025:

Tigran M. Petrosyants
Hrachya T. Petrosyants

THE GOVERNORSHIP (KOGHMNAKALUTYUN) DURING THE ZAKARIAN ERA IN ARMENIA

Abstract

In the last decade of the 12th century, in the first decade of the 13th century, Shahnshah Zakare II Zakaryan, who restored Armenia's independence, carried out administrative territorial reforms in the Armenia-Hayk kingdom he founded and gave bias to individual administrative units created within the country, biased names to their leaders, awarding the latter with the title of prince of princes. These territorial units, being the product of the historical and political situation of the 13th century, completely reflected the philosophical approaches of the country's leader to building a state. Although they were a new phenomenon in the Armenian reality of that time, they still had their historical precedents.

Key words - Zakaryans, Shahnshah Zakare B Zakaryan, Ivane A. Zakaryan, bdeshkh, viceroy, restoration of statehood, Vahramyans, Tmogvets, Vachutyans, Dopyans, Khalbakyan-Proshians, Orbelyans, Hasan Jalal Dolo.

Тигран М. Петросянц
Рачья Т. Петросянц

АДМИНИСТРАТИВНАЯ ЕДИНИЦА КОХМНАКАЛУТЮН В ЗАХАРИДСКОЙ АРМЕНИИ

Резюме

В последнем десятилетии XII века, в первом десятилетии XIII века, шахншах Закаре II Закарян, восстановивший независимость Армении, осуществил административно-территориальные реформы в основанном им Армения-Айкском царстве и придавал отдельным административным единицам, созданным внутри страны, и давал предвзятые имена их главам, даровав последнему титул княжеского князя. Эти территориальные единицы, являясь продуктом историко-политической ситуации XIII века, полностью отражали философские подходы лидера страны к государственному строительству. Хотя они были

новым явлением в армянской действительности того времени, они все же имели свои исторические прецеденты.

Ключевые слова: Закаряны, Шахншах Закаре Б Закарян, Иван А Закарян, бдешх, правитель пограничной области, восстановление государственности, Ваграмяны, Тмогвецы, Вачутяны, Допьяны, Хахбакян-Прошьяны, Орбеляны, Хасан Джалал Доло.

Մուտք

XII դարի վերջին տասնամյակում և XIII դարի առաջին տասնամյակում Հայաստանի փաստացի անկախությունը վերականգնած շահնշահ Զաքարե Երկրորդ Զաքարյանը Հայաստան-Հայքի թագավորությունում իրականացրել է վարչատարածքային բարեփոխումներ և երկրի ներսում ստեղծված առանձին վարչական միավորներին տվել **կողմնակալություն,** դրանց ղեկավարներին՝ **կողմնակալ** անուններ՝ նրանց շնորհելով **իշխանաց իշխանի** աստիճան-կոչում: Այս վարչատարածքային միավորները, լինելով XIII դարի պատմաքաղաքական իրավիճակի արդյունք, ամբողջովին արտացոլում էին երկրի ղեկավարի՝ պետություն կերտելու մոտեցումները: Թեև այդ ժամանակի հայկական իրականության մեջ դրանք նոր երևույթներ էին, այնուամենայնիվ ունեին իրենց պատմական նախադեպերը: Պատմահայր Մովսես Խորենացին հայտնել է, որ Արամ Աշխարհակալը երկիրը բաժանել է աշխարհագրական չորս կողմերի և այդ կողմերը հսկողներին անվանել **բդեշխներ**: Հայ պատմագրությունն այս բդեշխներին դիտարկում էր որպես ծայրագավառ-կողմերի պաշտոնատար կառավարիչներ, որոնք առաջինն էին ընդունելու և հակահարված տալու երկիր արշավող թշնամիներին: Բդեշխները համարվել են նաև **փոխարքաներ**: Վաղարշակ թագավորի հետ կապված ժամանակահատվածի համար Մովսես Խորենացին շրջանառության մեջ է դրել նաև **կողմնակալություն**, **կողմնակալ, կուսակալ** եզրույթները: Երկրակողմ պահող այս **բդեշխություն-կուսակալություն-կողմնակալություն**/ները՝ **փոխարքայությունների** կարգավիճակով, լիարժեքորեն գործել են Երվանդյանների, Արտաշեսյանների, Արշակունիների թագավորությունների ժամանակներում: Այս կառավարչական միավորները կառավարման համակարգում արդյոք միայն վարչական իրավասություններ ունեի՞ն, թե՞ նաև ռազմական գործառույթներ են իրականացրել: Այն փաստը, որ

դրանք պարտավոր էին առաջինը դիմակայելու հակառակորդ-թշնամուն, դրանց ռազմունակության գործառույթի ապացույցն է:

Բագրատունիների կողմից 885 թվականին վերականգնած անկախ պետությունը կորցրել էր իր աշխարհագրական տարածքի կեսից ավելին, պարփակվել էր Այրարատ նահանգի կենտրոնական մի քանի գավառների, Գուգարքի, Տավուշի մեկ-երկու գավառամասերում և այլևս այնպիսի սփռվածություն չուներ, որ բդեշխության-կողմնակալության ինստիտուտները վերականգնվեին: Բագրատունիների թագավորությունը մեկ ընդհանուր ամբողջություն էր:

Այլ կերպ վարվեց Զաքարե Բ Զաքարյանը: Իր վերականգնված Հայաստան-Հայքը նա վարչականորեն բաժանեց կողմնակալությունների:

1. Հայեցակարգային մոտեցումներ

XII դարի առաջին կեսին Հայաստանի Հյուսիսային տարածքները գրաված վրաց թագավորները իրենց համարել են Հայոց Բագրատունի թագավորների ժառանգորդ, սեփականել Բագրատունյաց Հայաստանի տարածքը, Բագրատունիների «շահնշահ» տիտղոսը, իսկ 1170-1177 թվականներին իրենց հռչակել «Հայոց արքա» (Какабадзе, 1926, 124): Մինչ 1185 թվականը Վրաստանի ռազմակալած Հայաստանի տարածքների հայ իշխանավորներն ու զորականները ծառայել են վրացական արքունիքին, մասնակցել պատերազմական գործողություններին, որոնք հիմնականում մղվել են Վրաստանին սահմանակից հայկական պատմական տարածքներում, բայց անմասն են մնացել պետական ինքնուրույնությունից: Սակայն օգտվելով 1185 թվականին Թամար թագուհու հրամանագրով Հայաստանին շնորհված ինքնուրույնության իրավունքից՝ 1185-1200 թվականներին՝ մեկուկես տասնամյակի ընթացքում, շահնշահ Զաքարե Բ-ն և եղբայրը՝ Իվանե Ա-ն, «բազում մարտս քաջութեան ցուցին, քանզի զբազում աշխարհս հայոց, զոր ունէին պարսիկք և տաճկունք, առին ի նոցանէ յինքեանս՝ զգաւառս, որ շուրջ զծովովն Գեղարքունւոյ, և զՏաշիր, և զԱյրարատ, զԲջնի քաղաք և զԴուին, և զԱնբերդ, և զԱնի քաղաք և զԿարս, և զՎայոյ ձոր, և զաշխարհն Սիւնեաց և որ շուրջ զնովաւ են բերդք, քաղաքք, և գաւառք. հարկատուս արարի և զսուլտանն Կարնոյ քաղաքին. աւերեցին զբազում գաւառս Պարսից և զԱտրպատականու, ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց» (Գանձակեցի, 1961, 163): Սելջուկ-թուրքերից ազատագրվել են Բագրատունիների ժամանակների Անի-Շիրակի, Կարսի, Զորագետի, Սյունյաց թագավորությունների տի-

ռույթները, Դվին քաղաքն իր շրջակա գավառներով: Ազատագրված հողերում Զաքարյանները դարձել են Հայաստանի ինքնիշխան տիրակալներ և իրենց հայտարարել Բագրատունի թագավորների իրավահաջորդներ: Ժամանակակիցները Զաքարյանների պետությունը կոչել են «պետություն», «աշխարհակալ պետություն», «պետական իշխանություն», «աշխարհակալություն», իսկ իրենց՝ Զաքարյաններին՝ «թագավոր», «շահնշահ», «կեսար» (Հայ ժողովրդի պատմություն, 1976, 541–544; Հայկական սովետական հանրագիտարան, 1977, 676–677; Մանանդյան Հ., 1977, 154), բոլոր տիտղոսներով, որ կրել են Բագրատունիները: Բայց իրենց հայտարարելով Բագրատունի թագավորական ընտանիքի ժառանգ, իրավահաջորդ և հինավուրց պետականության վերականգնողները՝ Զաքարյանները, իրավաբանորեն կրկնակի թագավորություն հռչակելու խնդիր չեն իրականացրել, բավարարվելով նրանով, որ ինչպես փորագրել են Հաղարծինի վանական համալիրի գավթի մուտքին, տիրել են «...սէփական ժառանգութեանն նախնեաց մերոց» (Դիվան հայ վիմագրության, 1977, 22) (Բարխուտարեանց, 1999, 346):

Սրանով է բացատրվում Զաքարե Բ–ի չթագադրվելը: Օգտագործելով այս փաստը՝ 1185–1236–ական թվականների Զաքարյան անկախ Հայաստան–Հայքը վրաց հեղինակները դիտել են Վրացական թագավորության մաս: Հայ պատմաբանները իրականությունն իր անունով կոչելու փոխարեն Զաքարե Բ–ի ստեղծած պետությունը կոչվել են պետությունից մեկ աստիճանով ցածր միավորում՝ իշխանապետություն՝ ավատական իշխանությունների միավորում[2]:

Արձանագրենք, որ Զաքարյանների վասալ լինելու, Հայաստանը Վրաստանի մաս կազմելու մասին դատողները պիտի իմանան, որ այլ երկրի մաս է միայն այն տարածքը, որը վարչական արտաքին սահմաններ, ներքին հստակ բաժանում, սեփական իշխանական իշխանակարգ (հիերարխիա), հորիզոնական և ուղղահայաց ենթակառուցվածքներ չունի և հարկատու է այլ պետության:

Իսկ Զաքարյան Հայաստանն ուներ.

ա) գերիշխանություն (суверенитет) (Բլբուլյան, 2011, 884) իր տարածքի նկատմամբ.

բ) պետական խորհուրդ՝ կառավարման բարձրագույն մարմին և արքունիք (Բաբայան Լ. Հ., 1964, 66–69).

---

[2] Զաքարե Ա շահնշահի ստեղծած բացարձակ անկախ պետության մասին գրել ենք մեր «ԶԱՔԱՐԵ. Հայոց շահնշահ, թագավոր, արքա, կեսար, ինքնակալ, տիեզերակալ» պատմաքաղաքական վեպում (2023):

գ) ստույգ արտաքին սահման Վրաստանի հետ, որ անցնում էր Գագ–Զորակերտ–Ջավախք–Արդահան–Փանասկերտ գծով (Թորոսյան, 1992, 325–326).

դ) ներքին վարչական հստակ բաժանում.

ե) իր տարածքում միատար բնակչություն.

զ) երկրում առկա հորիզոնական կառավարման համակարգ (գյուղ, քաղաք, գավառ, կողմնակալություն–փոխարքայություն, թագավորություն).

է) ուղղահայաց աստիճանակարգ (գյուղապետ, քաղաքապետ, կողմնակալ–փոխարքա՝ իշխանաց իշխան, իշխանական հրամանակատար, զորահրամանատար–սպարապետ, ինքնակալ թագավոր).

ը) 1185 թվականից սկսած Զաքարյան Հայաստանը հարկատու չէր երկրորդ երկրի (Ակներցի, 1954, 179; Ակներցի, 1974, 80), անգամ արշավանքներից ստացված ամբողջ ավարը տարվել է Լոռի, ավելի ուշ՝ Անի և Վրաստան մասհանում չի կատարվել, իսկ Թամար թագուհուն այցելելիս, Զաքարյան եղբայրները նրան միայն նվերներ են տարել, մինչդեռ տիրոջը, սյուզերենին օրենքով էր ավարամաս հասնում (Շահնազարյան, 1990, 320–321):

թ) 1185 թվականից հետո ձեռք բերած ռազմական ավարի որևէ պարտադիր մաս չի տրվել Վրաստանի թագավորական գանձարանին: Այդպիսի հատկացում կատարվել է միայն Վրաստանի տարածքում մղված պատերազմական գործողությունների ժամանակ մեկ հինգերորդի չափով՝ պատերազմներին վրացական զորամիավորման մասնակցության համար (Շահնազարյան, 1990, 152): Ներհայաստանյան տարածքներում մղված պատերազմներին վրաց զորամիավորումներ չեն մասնակցել և մասհանում չէր կարող կատարվել:

Հայաստանը ինքնուրույն հորիզոնական դիվանագիտական ճանաչում էր ստացել առաջին հերթին Վրաստանի արքունիքի կողմից 1185 թվականի անկախացման «սամթավրով»: Այդ նույն թվականին Հայաստան–Վրաստան դաշնակցային պետության ստեղծումով, Կիլիկիայի Հայկական թագավոր Լևոն Բ թագավորի Զաքարե Բ–ին ուղղված նամակով (Գանձակեցի, 1961, 168), Խլաթի էմիր Ավաղ Նեմջեդինի հետ կնքած պայմանագրով, 1223 թվականին Հռոմի պապ Հոնորիոս Գ–ի Երուսաղեմն ազատագրելու կոչին ի պատասխան, նրան ուղղված Իվանե Ա–ի նամակով, որտեղ Իվանե Ա–ն նշել է, որ պատրաստել է 40 հազարանոց զորք, բայց մոնղոլական հարձակման պատճառով չի կարողացել մասնակցել խաչակրաց արշավանքին (Ակներցի, 1974, 21–22) և Հռոմի պապի Իվանե

Ա-ին 1224 թվականի մայիսի 12-ի պատասխան նամակով (Թորոսյան, 1992, 302):

Հետազոտության վարկածը հետևյալն է.

ա) Զաքարյանները XII դարի 80-ական թվականներին վերականգնել են 1045 թվականին կործանված Հայոց պետականությունը:

բ) Զաքարյանները 1185 թվականին քաղաքական-պետական ասոցացված միասնական պետություն են կազմել Վրաստանի հետ՝ պահպանելով սեփական բացարձակ անկախությունը:

գ) Զաքարյանները Հայաստանի տարածքային կառավարման համակարգի հիմքում դրել են նոր ստեղծված **կողմնակալության-փոխարքայության** գաղափարը, որով գրեթե կրկնել են հազարամյակներ առաջ հայկական կառավարման համակարգում եղած կողմնակալություն-բդեշխություն-փոխարքայությունների գործառույթները:

դ) Կողմնակալություն-փոխարքայությունների, կողմնակալ-կառավարիչների հասարակական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային գործունեության պատմությունը ներկայացվում է կողմնակալության պատմական վերակենդանացման, դրա լեզվական բաղադրիչի, վարչական տարածքի ընդգրկման, կողմնակալ-փոխարքայի պաշտոնի և աստիճանի, կողմնակալության ռազմունակության տեսանկյուններից:

ե) 1185-1236 թվականների Հայոց անկախ պետականության և 1236-1350-ական թվ ականների մոնղոլական տիրապետության շրջանի հայկական կառավարման ժամանակաշրջանի առանձնահատկությունները:

2. «Կողմնակալություն», «կողմնակալ» եզրույթների լեզվաբանական հենքը

Հայ լեզվամտածողության մեջ առկա **կողմ/ն-ա-կալ/ություն** բառը բարդ, ածանցավոր գոյական է կազմված **կողմ** արմատից, **ա** հոդակապից, **կալ** արմատից, **ություն** վերջածանցից:

Հայ բառարանագիր-լեզվաբաններն այսպես են ներկայացրել **կողմ/ն-ա-կալ/ություն, կողմնակալ** եզրույթները:

1836 թականին Վենետիկում տպագրված «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» գրքում հեղինակները գրել են՝ ԿՈՂՄՆԱԿԱԼ. Ունօղ արքունի իշխանութ[եամ]ը կամ զաւառս տէրութե[ան]. Կուսակալ, բդեշխ, պէյ, փաշա, միասելլիմ: ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ. Իշխանու[թիւն]ի, կողմնակալի, կուսակալութ[իւն]ի (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», 1836, 1112):

Ակադեմիկոս **Ստեփան Մալխասյանցն** իր կազմած «Հայերեն բացատրական բառարան»-ում գրել է՝ ԿՈՂՄՆԱԿԱԼ, 1. Երկրի մի կողմի կամ նահանգի պետ՝ կառավարիչ, կուսակալ: ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ. 1. Կողմնակալ լինելը, կողմնակալի պաշտօնը, կուսակալութիւն (Հայերէն բացատրական բառարան, 1944, 1112):

Ակադեմիկոս **Հրաչյա Աճառյանը** գրել է, որ **կողմ** (-ման, -մանք, -մանց) բառն առաջացել է «կողմ, գաւառ, երկիր, կող, կողքին եզերքը» ձևից: Կողմն, միջին շրջանի ձևն է, որից...**կողմնակալ** ... (Աճառյան, 1973):

Ակադեմիկոս **Էդվարդ Աղայանը** «Արդի հայերենի բացատրական բառարան» գրքում գրել է՝ ԿՈՂՄՆԱԿԱԼ, 2. (պատմ.): Հին Հայաստանում՝ ծայրագավառների կուսակալ: 3. ԿՈՒՍԱԿԱԼ (պատմ.): 1. Նահանգի կառավարիչ, նահանգապետ (Արևմտյան Հայաստանում): 2. Իշխանության բարձրագույն ներկայացուցիչն ու կառավարիչը ծայրագավառում, **փոխարքա**[3] (ցարական տիրապետության շրջանում): 3. Ծայրագավառների կառավարիչ հին Հայաստանում (Աղայան, 1976, 750-784):

Աշոտ Սուքիասյանը «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ում գրել է՝ ԿՈՂՄՆԱԿԱԼ, 2. (պատմ.) Կուսակալ, կողմնապահ, կողմնապետ (Հին Հայաստանում ծայրագավառների պետ, իշխան): 3. Տե՛ս **Բդեշխ**: 4. Տե՛ս **Կողմնակից**: ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ... 2 (պատմ.) Կուսակալություն, **կողմնապետություն**: 3 Տե՛ս **Բդեշխություն**: ԲԴԵՇԽ, տե՛ս Կուսակալ, Հյուպատոս (Սուքիասյան, 2003):

«Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան»-ի հեղինակները արձանագրել են՝ ԿՈՂՄՆԱԿԱԼ. 2. Հին Հայաստանում՝ ծայրագավառների կուսակալ: ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ. 2. (հնացած) կուսակալություն, կողմնապահություն, կողմնապետություն (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1974, 169-170):

Վերը ներկայացված օրինակներից հետևում է, որ բառարանագիրները շրջանառել են **բդեշխ, կուսակալ, կառավարիչ, կողմնակալ, կողմնակալություն** եզրույթները, որոնք ներկայացրել է պատմահայր Մովսես Խորենացին՝ Վաղարշակ թագավորի կատարած նշանակումների առիթով: Սակայն բառարանագիրները մեկնաբանելով բառային եզրույթները դրանք իրարից չեն զատել և ամեն ինչ միանշանակ է ներկայացված՝ իրարից չտարբերելով վարչական միավորը և դրանց պաշտոնյա ղեկավարները:

[3] Ընդգծումը մերն է:

Օրինակ **բդեշխ**-ի[4] համար շրջանառված օրինակներ. «...և **բդեշխն** անուանեալ Աղձնեաց...» (Մովսէսի Խորենացւոյ, 1881, 73): **Բդեշխ և կողմնակալ**: «Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ **կողմնակալ** հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն, և նահապետութեանն անուն կարդայ **բդեշխ** Գուգարացւոց...» (Մովսէսի Խորենացւոյ, 1881, 113): **Բդեշխ և կուսակալ**: «Եւ զՇարաշան ի տանէ Սանասարայ հաստատէ **բդեշխ մեծ** և **կուսակալ** յարևմտից հարաւոյ, յեզեր սահմանացն ասորեստանի, առափն Տիգրիս գետոյ...» (Մովսէսի Խորենացւոյ, 1881, 116): «...հաստատէ **կուսակալ** արևմտից. և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն» (Մովսէսի Խորենացւոյ, 1881, 114): **Կողմնակալության** եզրույթի օգտագործման օրինակներ՝ «...և համայն ասել օրէն թագաւորութեան, և որ ինչ շուրջ թագաւորութեամբն. Զօրաց, զօրապետաց, **կողմանց կողմնակալաց**, և որ նման այսոցիկ» (Մովսէսի Խորենացւոյ, 1881, 109): «Յետ սորա (Վաղարշակի-Տ.Պ.) մեծ և անուանի և բազմաբեւր զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ **կողմնակալութիւն**՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հասանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր» (Մովսէսի Խորենացւոյ, 1881, 112):

Բերված օրինակներից չի երևում բդեշխ, կուսակալ, կողմնակալ պաշտոնյաները լոկ քաղաքացիական կառավարիչներ էին, թե նաև ռազմական բաղադրիչ կրողներ: Այս հարցի պատասխանը տալիս է Արշակունիների օրոք ստեղծված **Զորանամակը**:

3. Հայոց Զորանամակը վարչական միավորների ռազմունակության հենք

Վերը թվարկված օրինակներով փաստեցինք, որ Հայոց իշխանակարգում հնագույն ժամանակներից գործել է ստույգ գահակարգ, որի համաձայն՝ յուրաքանչյուր վարչական միավորի կառավարիչ ունեցել է գահ: Գահակալ իշխանավորներն արդյոք եղել են միայն քաղաքացիական՞ կառավարիչներ, թե՞ օժտված են եղել նաև ռազմական բաղադրիչով:

[4] Մասնագիտական գրականության համաձայն ծագել է պահլավական bitaxs ձևից և բառացի նշանակել է փոխարքա, կուսակալ, սահմապահ, կողմնակալ: Արտաշեսյանների օրոք Մեծ Հայքի սահմանապահ չորս բդեշխնեն էին **Անգեղտան, Ծոփաց, Աղձնեաց, Գուգարաց** կառավարիչները: Նրանց յուրաքանչյուրին ենթակա էին հարևան նախարարությունները (Ղազար Փարպեցի, 1982, 496):

Նրանք եղել են ոչ միայն քաղաքացիական կառավարիչներ, այլ նաև ռազմական պատասխանատուներ: Հայոց թագավորները երկրի պաշտպանունակությունը ամրապնդելու նպատակով երկրի տարածքը բաժանել էին աշխարհագրական չորս կողմերի՝ դրանցում ընդգրկելով իշխանական տների ռազմական կարողությունները:

Ասվածի հիմքը մեզ հասած Զորանամակն է (Յովհաննէս եպս. Շահխաթունեանց, 1842, 244–245):

Զորանամակով սահմանված ռազմական բաղադրիչ-իշխանակարգը ստույգ գործել է Արշակունիների թագավորության ժամանակահատվածում՝ մ.թ.ա. II դարից մինչև մ.թ. V դարը[5]:

Զորանամակի մեզ հասած օրինակում արտացոլված է իշխանական տների զորաունակությունը: Պատերազմական իրավիճակներում յուրաքանչյուր իշխանական տիրույթը հրամանատար-իշխանի գլխավորությամբ որոշակի քանակի հեծյալ զինվոր է հանել մարտադաշտ:

Զորանամակի գոյությունը հենց առհավատչյան է, որ Հայաստանի վարչական միավորները (բդեշխության, կուսակալության, կողմնակալության ղեկավարներ) ոչ միայն օժտված էին քաղաքացիական իշխանությամբ, այլ նաև ունեին ռազմական բաղադրիչի պարտադիր իրավասություն:

4. Կողմնակալություն-փոխարքայությունների հիմնումը Զաքարյան Հայաստանում

1185 թվականին Զաքարյանները վերականգնել են Հայաստան–Հայքի պետականությունը: Որոշակի փուլում իր աշխարհագրական ընդգրկումով երկու անգամ այն գերազանցել է Բագրատունյաց Հայաստանի տարածքը, ինչպես նաև ենթակա-հարկատու է դարձրել թե՛ արևելյան, թե՛ արևմտյան կողմերում գտնվող մուսուլմանական պետություններին:

Լոռու տարածքում անկախություն ստացած Սարգիս Մեծն իր թագավորության անկախությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով Վիրքի արքա Թամար թագուհու հետ վերպետական միավորում է ստեղծել, որի արդյունքում Հայաստանը և Վիրքը, մնալով անկախ պետական միավորներ, կազմել են միասնական կառավարման համակարգ՝

[5] Կարծում ենք, որ Արշակունիները Հայաստանում գահակալական իրավունք են ստացել Վաղարշակ թագավորով մ.թ.ա. երկրորդ դարից:

կառավարող մարմնով, որի կազմում Սարգիս Մեծը եղել է հայ-վրացական զորքերի գլխավոր հրամանատարը:

Սարգիս Մեծին 1187 թվականին հաջորդած շահնշահ Զաքարե Բ Զաքարյանը շարունակել է հոր գործը: Նրա օրոք վերպետական կառավարությունում Սարգիս Մեծի փոխարեն ընդգրկվել են ինքը՝ Զաքարե Բ-ն, Իվանե Ա-ն, Վահրամ Գագեցին: Սա նշանակում է, որ կառավարման այդ մարմնի հինգ անդամներից երեքը ներկայացրել են Զաքարյանները:

Զաքարե Բ Զաքարյանը հոր մահից հետո ամբողջովին նվիրվել է Հայաստան-Հայքի կայացման ներքին խնդիրների լուծմանը և անկախ պետության իրական կայացմանը: Նա, վերահաստատելով իր տոհմական շահնշահ տիտղոսը, երկրի կառավարելիությունը դյուրացնելու նպատակով, վերականգնել է կառավարման ուղղահայաց կարգը՝ Հայքի տարածքը բաժանել ուղղակիորեն շահնշահին ենթակա **կողմնակալությունների**: Դրանք կառավարելու համար նշանակել է **կողմնակալներ՝** շնորհելով վերջիններիս երկրի շահնշահ-միապետ-թագավորի աստիճանից հետո երկրորդ՝ **իշխանաց իշխան** կոչումը (Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, 1928, 16; Բաբայան Լ.Հ., 1964, 64; Գրիգորյան Գ.Մ., 1981, 53; Շահնազարյան Ա.Ի., 1990, 134; Պետրոսյանց Տ., 2023, 558):

Կողմնակալը պետական պաշտոնյա էր, կողմնակալության ռազմունակության բաղադրիչը: Զաքարե Բ-ի կողմից ստեղծված կողմնակալություններն ունեցել են փոխարքայությունների կարգավիճակ իր՝ Զաքարե Բ-ի (1187-1213), Իվանե Ա-ի (1213-1234), Իվանե Ա-ի որդի Սարգիս-Ավագի (1234-1236) օրոք[6]: 1236-1350-ական թվականներին, մոնղոլական տիրապետության ժամանակներում, դրանք հիմնականում շարունակել են ենթակա մնալ թագավոր-այուզերենի ժառանգներին: 1236 թվականից հետո որոշ կողմնակալ-փոխարքաներ, որոնք առավել ճկուն դիվանագիտություն են իրականացրել մոնղոլ տիրակալների հետ, ձեռք են բերել առավել հեղինակություն, իրենց ներկայացրել են արքա կամ թագավոր: Այդպիսին էին կողմնակալություն-փոխարքայությունների, գրեթե նույն շրջանում գործած գահակալներ Քուրդ Ա Վաչուտյանը, Տարսայիճ Օրբելյանը, Ամիր Հասան Պռոշյանը, Հասան Ջալալ Դոլան և նրանց ժառանգները: Մասամբ նրանց մասին է 1263 թվականին իր «Մեկնութիւն Դանիէլի Վարդանայ Արեւելցւոյ» աշխատության հիշատակարանում Վարդան Արևելցին գրել. «Աղաչեմ զամենեսեան սիրովն... ողորմութիւն և

[6] Թեև 1213 թվականին մահացած Զաքարե Բ-ին պիտի հաջորդեր Սարգիս-Շահնշահ որդին, բայց գահը բռնազավթել է հորեղբայրը՝ Իվան Ա-ն, որի մահից հետո գահն անցել է նրա որդի Սարգիս-Ավագին:

թողութիւն մեղաց, և ամենայն երախտաւոր պարոնացն Սադունին, Սմբատա, Քրդին, Պռաւշայ, և ամենայն բնակչաց երկրիս»: Հիշված անձերը ժամանակի խիստ հայտնի դեմքեր էին: Այստեղ բացակայում է Հասան Ջալալ Դոլոյի անունը, որ սպանվել է 1261 թվականին: Նոր է Սադուն Արծրունու անունը, որ ժամանակակից ու գործակից է եղել Սմբատ Օրբելյանի, Քուրդ Ա Վաչուտյանի, Պռոշ Պռոշյանի հետ:

Կտրականապես համաձայն չենք հայ այն պատմաբանների կարծիքին, որ վերը թվարկված անձանց մասին ասում են՝ ի՞նչ փոխարքա, ի՞նչ արքա, մի փոքր բերդի տերը ի՞նչ արքայությունից պիտի խոսի: Սա պարզ հեգնանք է՝ ուղղված սեփական պատմությանը[7]: Այրարատի, Սյունիքի, Վայոց Ձորի, Արցախի կողմնակալություն-փոխարքայություններից յուրաքանչյուրը և՛ ռազմական, և՛ տնտեսական, և՛ քաղաքական հզորություն ունեին: Այդ իշխանություններից յուրաքանչյուրը բավականաչափ տարածք, և բնակչություն ունեին, տիրապետում էին բերդերի ու ամրոցների, իրենց տարածքներում ունեին հոգևոր-մշակութային բազմաթիվ կառույցներ և, իրերն իրենց անուններով կոչելով, պնդում ենք, որ դրանք իրավաբանորեն փաստացի թագավորություններ էին:

Շահնշահ Ջաքարե Բ-ն արևելքի արքայատների նմանությամբ ստեղծել էր պետական արքունիք՝ գործակալներով և պաշտոնատարներով: Արքունիքի բարձրագույն պաշտոնյաներից էին գործակալ-նախարարները[8], «ամիրան»[9], «հեջուբը»[10], սպարապետը: Որոշ պաշտոնանուններ եկել էին արաբական և սելջուկյան ժամանակներից, որոշ անուններ

[7] Պատմաբան Արտաշես Շահնազարյանը Հասան Ջալալի դիվանագիտական գործունեության մասին հոդվածի անդրադարձում Հասան Ջալալի դերը համարել է ֆետիշացում և հեգնել է պատմական արձանագրությունները, որոնցում Հասան Ջալալին «արքա» են կոչել% (Շահնազարյան Ա.Ի., 1990, 199-216):

[8] Բարձրագույն պաշտոններ էին զբաղեցնում իշխանաց իշխաններ Բուբակը և Ամիր Սարգսի որդի Խավռասը (Բաբայան, 1964, 66):

[9] **Ամիրան** վարչական բնույթի գործառույթ է ունեցել: Նրա գործն էր քաղաքային ներքին կյանքի, առևտրականների և արհեստավորների վերահսկողությունը, հարկադրման հարկահավաքման կարգավորումը, զորահավաքը, քաղաքի պաշտպանության ժամանակ ժողովրդական ուժերի կազմակերպումը (Բաբայան, 1964, 71):

[10] **Հեջուբը** արքունիքի անմիջական վարիչն էր, վերակացուն կամ սենեկապանը: (Բաբայան, 1964, 74):

վրաց արքունիքի անվանացանկից, օրինակ մսախուրթուխցես[11], մանդա-դուրթուխուցես[12]:

Այդ պաշտոնները տրվել են ժամանակի նշանավոր իշխանավոր-ներին, կողմնակալ-փոխարքաներին:

Խծկոնքի վանքի հյուսիսարևելյան պատին փորագրվել է ոմն Դավթի արձանագրություն, որի մեջ նա հայտնել է, որ Զաքարե Բ-ի զո-րավար Գրիգորի (Դադյան, 1913, 182) որդին է: Զաքարե Բ-ի որդի Շահն-շահ Ա-ի տան զորավարը ճուճայն էր (Ալիշան, 1881, 128), հեջուբը և ա-ռաջնորդը՝ Զաքարիա Պահլավունին, ամիրան՝ Վահրամ Պահլավունին:

Իշխանաց իշխան Բուպան կամ Բուպաքը Իվանե Ա-ի տան գործա-կալ-զորավարն էր (Օրբելյան, 1986, 319), իսկ հեջուբը՝ Խաչենի ազատնե-րից Գրիգոր Տղան, որին մահանալիս Իվանե Ա-ն հանձնել է «զորդի իւր և զտուն» (Գանձակեցի, 1961, 222), իսկ Ավագն իր հերթին 1236 թվականին պաշարված Կայեն բերդից այս Գրիգոր Տղային դեսպան է ուղարկել թա-թար զորավար Չարմաղանի մոտ՝ հպատակություն հայտնելու (Գանձա-կեցի, 1961, 256): Իշխանաց իշխան Ամիր-Հասան Պռոշյանը Իվանե Ա-ի ժառանգների արքունիքի սպարապետն էր (Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, 1928, 20):

Կողմնակալություն-փոխարքայությունների արքունիքները բառա-ցիորեն կազմվել են Զաքարե Բ-ի արքայատան սկզբունքով: Ինչպիսի ար-քունիք ուներ Զաքարե Բ-ն, նույն սկզբունքով արքունիք էին ձևավորվել կողմնակալություն-փոխարքայությունները:

Վայոց Ձորի Հերհեր գյուղի իշխան Ամադին Շահուռնեցին եղել է Օրբելյանց տան «նիզակակալ և կորովաձիգ ասպարապետ ի դրան **թա-գաւորաշուք** իշխանաց Բիւրթելին և Վախախին» (ԺԴ դարի հայերեն ձե-ռագրերի հիշատակարաններ, 1950, 376):

XIII դարի առաջին քառորդում Վաչուտյանների Այրարատի փո-խարքայությունում Վաչե Ա Վաչուտյանի հրամանատար կամ հրամանա-կատար են եղել եղբայրներ Գրիգորը և Գուրգենը (Ղաֆադարյան Կ., 1948, 88), նրա օրոք ամիրայի պաշտոնում 1221 թվականին հիշվել է ավագ որդին՝ Քուրդ Ա-ն (Ղաֆադարյան, 1948, 94), հեջուբի պաշտոնում 1300 թվականին հիշվել է Ալվեցոյի թոռ, Հոնայի որդի հեջուբ Դավիթը (Ղա-

[11] Այս պաշտոնը զբաղեցրել է իշխանաց իշխան Խավռասը. **«գլուխ իշխեցող, և հրամանատար ամենայն իշխեցողաց և գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ»:**

[12] Զաքարե Բ-ի որդի Շահնշահ Ա սպասալարի 1251-1256 թվականների նվիրագրի տակ ստորագրող վկա է «մանդադուրթուխուցէս Համազասպ որդի Սարգսի»: (Հայ եկեղեցու պատմության սկզբնաղբիւրներ, 2007, 75):

ֆադարյան Կ., 1948, 83): Եթե հաշվի առնենք, որ բարձրագույն պաշտոն-ներն այդ ժամանակներում հիմնականում ժառանգական են եղել և փո-խանցվել են ընտանիքի ներսում, ապա Այրարատում կունենանք հեջուբ-ների իրար հաջորդած երեք սերունդ հանձինս Ալվեցոյ տոհմի:

Կողմնակալություն-փոխարքայությունները ղեկավարել են նշա-նակված կողմնակալները: Զաքարյան Հայաստան-Հայքի անկախության առաջին շրջանում՝ 1200-1213 թվականներին, նրանք գործել են իրենց վե-րապահված իրավասությունների, շահնշահ-թագավոր-սյուզերենի սահ-մանած կարգի սահմաններում, ներկայացել են սյուզերենի նկատմամբ ենթակայի ընդգծված ենթակարգությամբ: Մինչդեռ Զաքարե Բ-ի մահից՝ 1213 թվականից հետո, վրացադավանություն ընդունած, ավելի թույլ Ի-վանե Ա-ի օրոք արդեն իսկ աստիճանաբար դրսևորել են թագավորական ընտանիքից անթաքույց ինքնիշխանության դրսևորումներ: Մոնղոլական տիրապետության շրջանում թեև նրանք ձևականորեն պահպանել են աս-տիճանակարգը ընդհուպ մինչև Լենկ-Թեմուրի արշավանքները՝ 1350-ա-կան թվականները, բայց համեմատաբար ազատ են եղել, և նրանցից ո-րոշները մոնղոլների հետ ունեցած կապերի շնորհիվ ստացել են հարկա-յին ինքնուրույնության առանձնաշնորհ ու ձեռք են բերել բարձր ինքնա-վարություն, որի շնորհիվ՝ բարձրացել է նրանց ինքնուրույնությունը, նրանցից մի քանիսը անվանվել են «արքա», «թագավոր», «ինքնակալ» կամ անգամ «շահնշահ»: Օրբելյան տոհմի հիմնադիր Լիպարիտ իշխա-նաց իշխանի որդի իշխանաց իշխան Սմբատը, որ գահակալել է 1253-1273 թվականներին, երկու անգամ՝ 1251 և 1256 թվականներին, եղել է Կարա-կորումում և, առաջին այցի ժամանակ, շահագրգռության նպատակով, մոնղոլական մեծ խան Մանգուին նվիրել թանկարժեք գոհար, որի դիմաց իր տիրույթների համար ստացել է ինջու[13]: 1254 թվականին հայրենիք վե-րադառնալով՝ տեղի մոնղոլական կառավարիչներից նա ստացել է նոր հողային տիրույթներ, ապա զինական ուժով գրավել Պռոշյաններին, Զա-քարյաններին, Վաչուտյաններին պատկանած տարածքներ Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Ուրծի գավառներում: Նախ վրաց արքունիքում նա նշա-նակվել է գահաժառանգի խնամակալ և աթաբեկ (Ստեփանոս Օրբելյան, 1986, 325-335), ապա ավելի ուշ՝ Թավրիզի արքունական պալատի ան-

[13] **Ինջու** - արքունական, ժառանգական հողատիրույթ մոնղոլական պետությունում և Հուլավյան իլխանությունում /1256-1353 թթ-ին/: Այդ կալվածքներն ազատվել են պետական հարկից, ստացված հարկերը գանձվել են դրանց տիրոջ օգտին: Իշխանավորները, հարկերից ազատվելու նպատակով, իրենց տիրույթներով հա-ճախ մտել են մոնղոլական իլխանության ինջուի մեջ /(Հայկական համառոտ հանրագիտարան, 1995, 361):

դամ, և Թավրիզում 1273-ին կնքել մահկանացուն (Ստեփանոս Օրբելյան, 1986, 335): Հենց այսպիսի ճանաչվածության համար ժամանակակիցները Սմբատ Օրբելյանին վերագրել են արքայական պատիվ՝ անվանել արքա: Նորավանքի գավթի 1261 թվականի շինարարական արձանագրության մեջ արձանագրված է. «Ի թուիս ՉԺ /1261/ այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի իմ՝ Սմբատա, իշխանաց իշխանի, որդո մեծին Լիպարտա, որ զգաւիթս շինեցի» (Դիվան հայ վիմագրության, 1967, 218): Նույն տեղում մեկ այլ նվիրատվական արձանագրության մեջ Սմբատի անունից վիմագրվել է. «Ես՝ Սմպատ, իշխանաց իշխան...» (Դիվան հայ վիմագրության, 1967, 218): Իսկ առաջին արձանագրության տակ՝ մեկ այլ արձանագրության մեջ, արդեն շեշտված է նրա հզորությունը. «Ի տէրութեան իշխանաց իշխանին Սմպատա» (Դիվան հայ վիմագրության, 1967, 219): Սմբատ իշխանաց իշխանին փոխարքայության գահին փոխարինել է եղբայրը՝ Տարսայիձը: Նա Նորավանքում, եղբոր գերեզմանին, դամբարան-մատուռ է կառուցել և արևմտյան մուտքին վիմագրել. «Ես՝ Տարսաիձ իշխանաց իշխան, շինեցի զդամբարանս յաղագս եղբաւր իմո **Սմպատ արքային**... ի թվին ՉԻԴ /1275/» (Դիվան հայ վիմագրության, 1967, 234): Դամբարանում գտնվող Սմբատի տապանաքարին փորագրվել է. «**Սմպատ արքային** է տապանս: ՉԻԲ /1273/»: Նույն դամբարանում է թաղվել Տարսայիձ իշխանաց իշխանի կինը: Նրա տապանաքարին փորագրվել է. «Ի թվին ՉԽԷ /1298/: Թագազարմ արքայուհին է՝ Մինա խաթունն, դուստր մեծ **կողմնակալին Աղուանից Զալալին**» (Դիվան հայ վիմագրության, 1967, 237): Հոր՝ Տարսայիձ իշխանաց իշխանի մասին դուստրը՝ Արցախի Ծար գավառի տեր, Դոփյան տոհմից իշխանաց իշխան Գրիգոր Գ-ի կինը՝ Ասփա իշխանուհին, Խադարի կամ Խադայի վանքի եկեղեցու բեմի ճակատին արձանագրել է. «ես՝ Ասփե, դուստր **արքայաշուք իշխանին Տարսայիձին, թագազարմ մօրն իմոյ՝ Մինախաթունին**»[14]:

Օրբելյան տոհմի հաջորդ սերունդները ևս հիշատակել են իրենց թագավորական ծագումը: XIV դարի կեսերին Իվանե Օրբելյանի դուստր, Վայոց ձորի Հերհեր գյուղի տեր Ամատին Շահուռնեցի զորավարի կին Թուղթանը, պատերազմում զոհված ամուսնու հիշատակին կառուցել է եկեղեցի, գնել ու եկեղեցուն է նվիրել դարասկզբին գրված մի Ավետարան, որի հիշատակարանում արձանագրել է. «իշխանաց իշխանս Թուղթանի, **դուստր Իւանէ թագաւորատոհմ** եւ բարեպաշտ իշխեցողի Որոտան գաւառի» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1950,

[14] Արձանագրությունն այժմ գոյություն չունի: (Դիվան հայ վիմագրության, 1967, 129)

374), ապա մի քանի տող հետո կրկին նշել. «եւ իշխանութեան քաջ զաւրավարին Հայոց, աստուածասէր եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Բեշքենայ եւ Իւանէ, եւ յետ աստուածասէր երգիւղալից **թագաւորայշնորհ պարոն Բիւրդելին եւ Վախախին**, որ ի Քրիստոս փոխեցան» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1950, 375):

Նորավանքի Օրբելյան տոհմի դամբարանում Մինա խաթունի տապանագիրն ապացույց է, որ Ներքին Խաչենի տեր Հասան Ջալալը ևս հիշվել է թագավորական տիտղոսով: Սմբատի դամբարանի հյուսիսային պատի արևելյան կամարին փորագրված է Մինա խաթունի արձանագրությունը. «Այս գիր յիշատակի... Մինա խաթունիս է, դստեր **մեծի արքային Ջալալին**... Ի թվիս ՉԽԱ (1292)»: Հասան Ջալալի ինքնակալ (արքա) լինելը հաստատվում է նաև իր՝ Գանձասարի տաճարի 1240 թվականի մեծ արձանագրության մեջ. «Ես նուաստ ծառա Աստուծոյ Ջալալ Դաւլայ Հասան, որդի Վախտանգա, թոռն մեծին Հասանա, **բնակաւոր ինքնակալ բարձր եւ մեծ** Արցախական աշխարհի, **ինքնակալ** Խ/աւխանա/բերդի յոքնասահման նահանգաւք» (Դիվան հայ վիմագրության, 1982, 38): Տաճարի արևմտյան պատին, Հասան Ջալալի դուստր Մամախաթունն արձանագրել է. «ես... Մամախաթունս, դուստր **ինքնակալ** իշխանաց իշխայնին Ջալալ Դաւլա Հասանա...» (Դիվան հայ վիմագրության, 1982, 38): Արցախի Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ գտնվող Մեծիրանից Սուրբ Հակոբ վանքի սրահի հարավային պատին ոմն Սմբատ արձանագրել է. «**Թագ/աւ/որ Ջալալայ Դաւլին** հրամանով... տվի էգատեղ» (Դիվան հայ վիմագրության, 1982, 15): Այգու տարածքի նվիրատվությունը, բովանդակությունից ելնելով, կատարվել է Հասան Ջալալի կենդանության օրոք: Բերդաձորի Սուրբ Գրիգոր կամ Կարմիր վանք եկեղեցու հյուսիսային պատին Սակոի որդի Գրիգորիսը արձանագրել է. «Յիշխանութեան բարեպաշտ **արքային Ջալալ Դաւլին** եւ որդո իւրոյ Իւանոյ Աթաբակին, ես Գիրիորիս... վերստին շինեցի զեկեղեցիս ի թուիս ՉԼ /1281/» (Դիվան հայ վիմագրության, 1982, 116): Նույն եկեղեցու հյուսիսային պատին Խաչիկ վարդապետը տեսել է հետևյալ արձանագրությունը, որը ցավոք նշված տեղում ներկայում չկա: Բերում ենք հեղինակի տպագրած տեքստից. «ՈՀԸ /1229/ թվ. Ես Տիրածայրս Ապարանից, **բարեպաշտ արքային Ջալալին**» (Դիվան հայ վիմագրության, պրակ 1982, 120):

Վաչուտյան Քուրդ Ա իշխանաց իշխանը կենդանության օրոք ժամանակակիցների կողմից պատվվել է «մեծ» կոչումով (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1984, 211բ–212ա): Դրանով է բացատրվում, որ 1254–1255 թվականներին մոնղոլական արքայակայան Կարակորում մեկ-

նող Կիլիկիայի Հեթում Ա թագավորը մեկնելիս և վերադարձին հյուրընկալվել է նրա՝ Վարդենիսի դղյակում: Կիլիկյան մի հիշատակարանում Քուրդ Ա-ն մեծարվել է **«շահնշահ»** տիտղոսով (Բաբայան Լ.Հ., 1964, 64):

Այրարատի կողմնակալ, իշխանաց իշխան Քուրդ Բ Վաչուտյանը ամրապնդել է իր դիրքերը և ձեռք բերելով քաղաքական կշիռ՝ դարձել իր ժամանակի ամենից աչքի ընկնող դեմքերից մեկը: Ասվածի ապացույցն է 1316-1335 թվականների միջև գրված ձեռագրի հիշատակարանը. «Յայսմ ժամանակի երեւեալ քաջ և արի, յաղթող և բարձրաբազուկ իշխանաց իշխանն՝ յազգէ Վաչէի, որդի Տայիրին, որդոյ բարեպաշտ և աստուածասեր Քրդին, որ և անուն նորա **Քուրդ** կոչի, **որոյ անուամբն և քաջութեամբն մնաց գաւառս մեր և վանորայքս անշարժ և անվնաս յայսմ մեղսաշարժ և դառն ցասմանցս.** զի յայսմ նուազեալ և դառնացեալ աւուրս, որ վասն մեղաց մերոց, երեւեալ մեծափառ և աստուածահաճոյ մեծ զօրավարն և երեւելի նախամարտիկ, պարծանաց և զարդու զաւակն Հայաստանից, ամենաօրհնեալ **Քուրդն, զի ոտնաձայնք երիվարացն նորա, և ճոճիւն նիզակացն, և փայլատակումն սուսերացն, ճայթմունք աղեղացն և կուռ զրահքն և ասպարափակ լինելն, և այլ ահարկու կազմուածն՝ զարհուրեցուցանէին զթշնամիսն, թող զյաղթութիւն և զքաջութիւն, և բազում պատերազմաց վանումն ի ձեռն նորա, և ազատազօրաց նորա բազմութիւն, գեղեցկութեամբ՝ իբրեւ զօր երկնից, և քաջութեամբ՝ իբրեւ զառիւծ կամ իբրեւ քաջարծուի ի վերայ Հայաստանեաց, յամենայն պատերազմունս:** Այնու՝ առաջի այլասեռ թագաւորացն՝ Ղազանին և Ղարապանդին և Պուսայիդի և մեծամեծ և սպարապետ նոյինացն մեծարգոյ և փառաւոր երեւեալ, և յամենայն շուք և պատիւ և խիլայ ընդունեալ, պահէր խնամօքն և ողորմութեամբ աստուծոյ զգաւառս և զվաներս ի խաղաղութեան, և այլոց գաւառակցացն բազում կարեկից և օգնական լինէր: Որոյ՝ աջն անեղին և բազուկն հզօրին աստուծոյ հովանի և պահապան լիցի նմա ի տուէ և ի գիշերի, աստուածասէր և բարեսէր ամուսնաւն Խոյան խաթունիւն և ամենայն հեծելազօրացն: Քաղցրասցի նմա աչք բռնաւորաց և մեծամեծաց, և թշնամիք նորա առաջի յամօթ և նկուն լիցին, և իբրեւ զԿոխ և զԴադան յանդունդս իջցեն. և ձեռք նորա հանապազ ի վերայ թիկանց թշնամեաց իւրոց, ամէն» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1950, 270-271): Թշնամիների դեմ տարած հաղթանակները Քուրդ Բ-ն հավերժացրել է Կարբիի հաղթակամար-զանգակատան կառուցումով, որի շինարարությունն ամենայն հավանականությամբ ավարտվել է 1338 թվականին: Նման հաղթակամարի կառուցումը եզակի երևույթ է հայկական իրականության մեջ:

Քուրդ Բ–ն հավասարապես ճանաչման է արժանացել Ղազան, Ղարպանդ, Պուսայիդ խաների օրոք (1295–1335 թվականներին), ինչպես նրանցից, այնպես էլ նրանց մեծամեծերից ու զորավարներից ստացել է **պատիվ ու խիլայ** (յառլիկ–Տ.Պ.):

Քուրդ Բ–ի բնութագրական գնահատականները գրեթե նույնական են XIV դարի մեկ ուրիշ խոշոր քաղաքական դեմքի՝ Գրիգոր Խաչենցուն (–Ծարեցի, Հաթերքցի) նվիրված նկարագրությանը. «Յայսմ ժամանակի ծագեցաւ ոմն, մեծ և երևելի տոհմային պայազատութեան, ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի դասակարգէ քաջաց, **ի գնդէ** գովելեաց, Գրիգոր իշխան Հայոց...» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1950, 84):

Մարտունու տարածաշրջանի Վարդենիկ գյուղի մոտ գտնվող Իշխանավանքի գերեզմանատան տարածքում կանգնեցված խաչքարի վրա պահպանված 1290 թվականի արձանագրությունը վերաբերում է Պռոշյան գերդաստանի անվանի իշխանավորներից Ամիր Հասանին: Վիմագրի համաձայն. «Ի թվ/ին/ ՉԼԹ, կամաւն Աստուծոյ, կանկնեցաւ սբ. Խաչս իշխանութեան բարեպաշտ **արքային Ամիր Հասանայ**...» (Դիվանն հայ վիմագրության, 1973, 150):

1292 թվականին Խոտակերաց Սուրբ Նշան եկեղեցում արտագրած «Ավետարան»–ի հիշատակարանում գրիչ Շմավոնը Պռոշ իշխանաց իշխանին այսպես է բնութագրել. «Այլ և ներող զօրութիւնն Աստուծոյ պահեաց սակաւ իշխանս յազգէս մերմէ, արիք և քաջք ի պատերազմունս և նոքաւք նուաջէր զազգս Հայոց: Յորքց մի էր ի նոցանէ մեծ սպարապետն տանն Աւագին, որդւոյ Իւանէ մեծ աթաբակին, որ կոչէր անուն նորա Ամիր Հասան, որդի մեծին **Պռոշա թագաշուք իշխանին**» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1984, 682):

Ամիր Հասանի հռչակն այնպիսին էր, որ երբ 1292 թվականին նա կնքել է մահկանացուն, հիշատակարանագիրը արձանագրել է. «զի իշխանաց իշխանս մեր Ամիր Հասան մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս, և ամենայն աշխարհ ի սուգ և ի տրտմութիւն անկան՝ Հայք և Վիրք, Ափղազք և Հոռոմք, զի թէպետ որ իշխանաց իշխան կոչիւր, սակայն ի **թագաւորաց անբաժանելի էր**, որ յամենեցուն լսելիս հասեալ էր բարի լուր և համբաւ նորայ, որ հեռաւորքն որպէս ի մաւտոյ կոծ և աշխարումն կատարեցին» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1984, 676):

Կողմնակալությունը՝ վարչական միավոր: Կողմնակալությունների գործառույթներին որոշակի բացատրություն է տվել պատմաբան Լևոն Բաբայանը՝ Վիրքի օրինակով: Նա գրել է. «Վրաստանի ... կենտրո-

նական իշխանությունն իրագործվում էր «Սվազիրոյի» միջոցով (թագավորի և վեզիրների խորհուրդ): Այդ խորհուրդը բաղկացած էր թագավորից, վեց վեզիրներից և երկու օգնականից: ... Գավառներն ու շրջանները կառավարում էին էրիսթավները՝ կողմնակալները-զինվորական հրամանատարները, որոնք իրենց վստահված կամ սեփականատիրական իրավունքով իրենց պատկանող շրջաններում, գավառներում, ֆեոդալական տիրույթներում հանդիսանում էին փոխարքաներ և այդտեղ լիակատար տեր ու տնօրեն էին» (Բաբայան Լ. Հ., 1964, 64):

Կողմնակալություն-փոխարքայությունների վերաբերյալ այս բանաձևումը կառավարման նոր մոդել չէր և խորթ չէր նաև հայկական իրականությանը: Այն գրեթե կրկնում էր մեկուկես հազարամյակ առաջ հայոց պետությունում գործած բդեշխություն-կուսակալություն-կողմնակալություն-փոխարքայություն կառավարման համակարգը:

Թեև 1185 թվականին Սարգիս Մեծ Զաքարյանը Վրաստանից անկախություն էր ստացել իրեն ենթակա Լոռու տարածքի նկատմամբ, բայց Վիրքը դեռևս նրան չէր վերադարձրել Վիրքի հարավում ռազմակալված հայկական տարածքները: Եվ հենց այդ բռնակալված հայկական տարածքներում՝ Վրաստանի հարավում՝ արևմտյան ու արևելյան կողմերում, 1191 թվականին հիմնվել են հայկական առաջին անկախ վարչական միավոր-կողմնակալությունները: Դրանք էին.

ա) 1191 թվականին Թամար թագուհու դեմ Գեորգի Ռուսի (առաջին ամուսնու) ապստամբության ճնշմանը մասնակցելու համար Թամար թագուհու հրամանով ժառանգական իրավունքով Թմոգվի=Թմբկաբերդ ամրոցը ստացել է Հայոց թագավոր, Հայոց և վրաց ամիրսպասալար Սարգիս Մեծ Զաքարյանի եղբոր՝ Վահրամի որդի Սարգիս Ա-ն և այդ երկրամասի մի հատվածում ձևավորվել է կուսակալություն-կողմնակալություն: Այս Սարգիս Ա-ի սերունդը պատմության մեջ մտել է Թմոգվեցի տոհմանունով (Հայկական սովետական հանրագիտարան, 1984, 216):

բ) Թամար թագուհին Վահրամի մյուս որդուն՝ Բլուզ Զաքարեին, իր զինուժով Գագ, Քավարզին, Երգևանք, Տավուշ, Կածարեթ, Տերունական, Սագամ, Գարդման, Քարհերձ բերդերի և Շամքորի ազատագրմանը մասնակցելու համար 1191 թվականին ժառանգական իրավունքով տվել է Գագի բերդն ու տարածքների կուսակալ-կողմնակալի պաշտոնը: Պատմության մեջ Բլուզ Զաքարեի սերունդը մտել է Վահրամյաններ անունով (Շահնազարյան Ա. Ի., 1990, 216):

Արդեն կողմնակալության վերածված այս տարածքները Հայաստան-Հայքին են վերադարձվել Սարգիս Մեծին գահի վրա հաջորդած ա-

վագ որդու՝ շահնշահ Զաքարե Բ Զաքարյանի պահանջից հետո և դարձել են անկախացած պետության առաջին կողմնակալությունները:

1187 թվականից հետո, հոր գործը շարունակած Զաքարե Բ-ն, շարունակել է իր նորանկախ պետության տարածքի մեծացումն ու ամրապնդումը: Նա Թմոգվիի ու Գագի կողմնակալություն-փոխարքայությունները համարելով հայկական տարածքներ և պետության հիմք, միացրել է Լոռու թագավորությանը: Ավարտին է հասցրել պետություն ստեղծելու նախապատրաստական հիմնավորումները և կառավարման միասնականացման նպատակով իրականացրել վարչական ռեֆորմ և պետության հիմքում դրել Թմոգվիի և Գագի կողմնակալություն-փոխարքայությունների իշխանական տարբերակը: Այդ նույն տարբերակով 1203 թվականին ազատագրված Դվին քաղաքում ստեղծել է միայն Դվին քաղաքն ընդգրկող կողմնակալություն: Այն, որպես երկրի նախկին մայրաքաղաքը, այդ պահին ավելի քան 150.000 բնակիչ ունեցող քաղաքը, հանձնել է գահակից եղբորը՝ Իվանե Ա-ին: Կառավարման ռեֆորմը ավարտական փուլին է հասել հավանաբար 1203 թվականի ընթացքում: Զաքարե Բ-ի հրամանով Թմոգվիի, Գագի, Դվինի արդեն ձևավորված կողմնակալություն-փոխարքայությունների, հնից հայտնի Մածնաբերդի, Ներքին ու Վերին Խաչենների թագավորությունների, որ նույնպես վերածվել են կաղմնակալություն-փոխարքայությունների կողքին, Այրարատ նահանգի տարածքի մի զգալի հատվածի վրա հիմնել է Այրարատի կողմնակալություն-փոխարքայությունը, երկու ավելի փոքր կողմնակալություն-փոխարքայություններ ստեղծվել են նոր նվաճված Վայոց Ձորում և մասնակիորեն՝ Սյունիքում[15]:

Մածնաբերդի կողմնակալ է նշանակվել թագավոր Աղսարթոնը, Հաթերքի կողմնակալ՝ Վաղթանգ Սակռ թագավորը, Ներքին Խաչենի կողմնակալը՝ Զաքարե Բ-ի քույր Խորիշահի ամուսին Վաղթանգ Տանգիկը, Խաչենի Ծարա ձյուղի կողմնակալ՝ Զաքարե Բ-ի քույր Դոփը, որի ամուսինը՝ գահերեց իշխան Հասան Ա-ն, մահացել էր[16]: Դոփի անունով տոհմը կկոչվել է Դոփյան (Կարապետ եպիսկոպոս, 1914, 44): 1203/4 թվականին նորաստեղծ կողմնակալություն-փոխարքայությունների կողմնակալ-փոխարքա Այրարատում նշանակվել է Վաչե Ա Վաչուտյանը (Պետրոսյանց Տ., 2001, 363; Պետրոսյանց Տ., 2023, 556; Պետրոսյանց Տ., 2018,

[15] Օտարի կողմից զավթված հողերի ազատագրման հաշվին այս կողմնակալության տարածքի մեծացումը շարունակվել է մինչև 1219 թվականը, հայկական հարևան իշխանությունների հողերի հաշվին մեծացվել է նաև 1260-ական թվականներին:

[16] 1214 թվականին Դոփի կողմնակալությանը կմիացվի նաև Հաթերքի կողմնակալությունը:

163; Պետրոսյանց Տ., Զաքարե, 2023, 516), Վայոց Ձորում՝ Վասակ Խաղ-բակյանը (Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, 1928, 304): 1204/5 թվա-կանին Սյունիքի կողմնակալ է հաստատվել Լիպարիտ Օրբելյանը (Գրի-գորյան Գ.Մ., 1981, 318), 1205/6 թվականին՝ Կարսի կողմնակալ՝ Իվանե (Հովհան) Ախալցխացին[17]:

Կողմնակալության-փոխարքայության կարգավիճակ են ունեցել բոլոր վերը թվարկված վարչական միավորները: Դրա անվերապահ ա-պացույցը Ներքին Խաչենի ինքնակալ-թագավոր Հասան-Ջալալի Գան-ձասարի վանքի արևմտյան պատի հարավային մասում, ներկայումս գավթի մեջ փորագրված 1261 թվականի արձանագրությունն է. «...ես՝ Ջա-լալ Դաւլաս, որդի Վախտանգա, **կողմնակալ** Արցախայ...» (Ուլուբաբյան Բ., 1975, 454): Նույն տեղում Հասան Ջալալ Դոլոյին վերաբերող մեկ այլ արձանագրությամբ նրա դուստր հայտնել է. «...ես... Մամախաթունս, դուստր **ինքնակալ իշխանաց իշխանին** Ջալալ Դաւլա Հասանա...» (Դի-վան հայ վիմագրության, 1982, 41):

Համաձայն չենք այն մոտեցման հետ, թե Հասան-Ջալալն ավելի բարձր ինքնուրույնության մակարդակ է ունեցել, քան մյուս կողմնակա-լություն-փոխարքայությունները: Փաստենք, որ ինչպես նա, այնպես էլ հին տոհմերից Մածնաբերդի Աղսարթոնը, Հաթերքի Վախթանգը նույնպես սերել են թագավորական տոհմերից: Այստեղ միայն մեկ տարբերություն կարող ենք արձանագրել: Սարգիս Թմոգվեցին, Զաքարե Գագեցին շահն-շահ Զաքարե Բ-ի հորեղբորորդիներ էին, Իվանե Ա-ն՝ եղբայրը, Հասան Ջալալը՝ նրա քրոջ որդին: Աղսարթոնի, Վաչե Ա Վաչուտյանի, Լիպարիտ Օրբելյանի, Վասակ Պռոշյանի, Իվանե Ախալցխեցու նկատմամբ սրանց ո-րոշակի առավելությունը միայն արքայատան հետ անձնական-բարեկա-մական կապն է եղել:

Փաստորեն Զաքարյան Հայաստան-Հայքի կազմում գործել են Գա-գի, Թմոգվիի, Մածնաբերդի, Դվինի, Այրարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Հաթերքի, Ծարի, Ներքին Խաչենի, Կարսի կողմնակալություն-փոխարքա-յությունները:

Համաձայն չենք նաև հայ պատմագրության մեջ կարծրացած այն տեսակետին, որի համաձայն՝ ազատագրված Հայաստան-Հայքը բաժան-վել է Զաքարե Բ-ի, Իվանե Ա-ի ու Վահրամյանների միջև: Սրա պատճառն այն է, որ հայ պատմագրությունը չի ընդունել Զաքարե Բ-ի վերակերտած

[17] Կարսի ազատագրումից հետո Թամար թագուհին փորձ է արել այն կցել Վիրքի տարածքին: Զաքարե Բ-ի պահանջով մի քանի ամիս անց այն վերադարձվեց Հայաստանին:

Հայաստան–Հայքի պետականությունը: Այսինքն՝ պետությունը մասնատելով՝ այդ կտորներից ձևավորել են պետություն չդարձած իշխանապետություն: Իհարկե, այդպես չէ: Զաքարե Բ–ն հիմնադրել է ամբողջովին անկախ պետականություն իր՝ շահնշահի գլխավորությամբ, իսկ մնացյալ բոլոր կառույցները եղել են ենթակա կողմնակալություններ:

Պետության առաջին ինքնակալ–շահնշահ Զաքարե Բ–ն, նրա գահակից եղբայր Իվանե Ա–ն նորաստեղծ կողմնակալություն–փոխարքայությունների համար ապահովել են համապատասխան իրավական կարգավիճակ.

ա) կողմնակալություն–փոխարքայություններին տրվել է կառավարման հստակ տարածք,

բ) կոմնակալ–փոխարքաներին կողմնակալության–փոխարքայության տարածքում, կերակրվելու համար, տրվել է ժառանգական հայրենիք–կալվածք (օրինակ, Այրարատի կողմնակալություն–փոխարքայությունում, կառավարման տարածքից անկախ, Վաչուտյաններին ժառանգական սեփականության իրավունքով տրվել են Նիգ–Արագածոտն գավառները, Անբերդի գավառամասը, Շիրակից՝ գավառամաս),

գ) կողմնակալ–փոխարքաներին շնորհվել է պետական աստիճանակարգի թագավորից հետո երկրորդ՝ իշխանաց իշխան բարձրագույն կոչում[18],

դ) կողմնակալ–փոխարքաներին տրվել է կողմնակալության–փոխարքայության տարածքում ինքնուրույն իշխելու իրավունք:

Զաքարյանների կողմից Հայաստանում հիմնված կողմնակալություն–փոխարքայությունները լուծել են պետության ներսում թե ուղղահայաց, թե հորիզոնական կառավարման խնդիրը և 1200–1236 թվականներին դարձել են պետական, ռազմական, մշակութային կարևորագույն գործիք Զաքարյան տիրակալների համար:

Եզրակացություններ

Կողմնակալություն, կողմնակալ եզրույթները թեև հնագույն ծագում ունեն, հայկական քաղաքական, ռազմական, վարչական մտածողության, հիշատակագրության մեջ շրջանառվել են նվազագույնը մ.թ.ա. V դարից, ունեցել են ստույգ կիրառական նշանակություն: Համոզված ենք, որ

[18] Այստեղ հիշվել է ինչպես Հասանի «ինքնակալ» («թագավոր»), տոհմական տիտղոսը, այնպես էլ Զաքարե Բ–ի շնորհած իշխանաց իշխան կոչումը: Դրանից բարձր էին միայն «շահնշահ», «կեսար» կոչումները, որոնք վերապահված էին միայն Զաքարե Բ–ին: (Դիվան հայ վիմագրության, 1982, 41)

պատմահայր Մովսես Խորենացին շրջանառության մեջ դնելով կողմնակալություն, կողմնակալ, կուսակալ, բդեշխ, նախարար եզրույթները, կատարելապես գիտեր դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը: Գիտեր, որ կողմնակալությունը, կուսակալությունը, բդեշխությունը վարչատարածքային միավոր են, բդեշխը, նախարարը՝ աստիճան-կոչում, կողմնակալը, կուսակալը՝ պաշտոն:

XIII դարի սկզբին Հայաստան-Հայքի շահնշահ Զաքարե Բ Զաքարյանի կողմից վերաշրջանառության մեջ դրված **կողմնակալություն** եզրույթը, ինչպես հնում, վարչատարածքային միավոր էր, իսկ **կողմնակալ** եզրույթը՝ պաշտոն: Կողմնակալ նշանակված պաշտոնատարներին համապատասխանաբար շնորհվել է **իշխանաց իշխան** բարձրագույն աստիճան-կոչում: 1203 թվականին ստեղծված կողմնակալություն-փոխարքայությունները կարևորագույն դեր են ունեցել Զաքարյանների ստեղծած անկախ պետության համակարգում և, մինչև մոնղոլների կողմից Հայաստանի գրավումը, երեք տասնամյակ ապահովել են հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացումը:

Տիգրան Մ. Պետրոսյանց – հեղինակ է 66 գրքի և հարյուրից ավելի գիտական հոդվածների: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են XII-XIV դարերի Հայոց պատմությունը, Հայոց պետության պաշտպանական հնարավորությունների, հայ իշխանական տների, նրանց զինանշանների պատմության հետ կապված խնդիրները:

Հրաչյա Տ. Պետրոսյանց – համահեղինակ է երկու գրքի, վեց գիտական հոդվածների: Գիտական հետաքրքրությունների շրջանակում Հայոց բանակի պաշտպանական հնարավորություններին առընչվող խնդիրներն են:

Գրականության ցանկ

1. **Ալիշան Հ. Ղ.,** (1881). *Շիրակ,* Վենետիկ, 192:
2. **Աղայան Է. Բ.**, (1976). *Արդի հայերենի բացատրական բառարան:* Ա-Ձ: Եր., «Հայաստան» հրատարակչություն, 929:
3. **Աճառյան Հր.**, (1973). *Հայերեն արմատական բառարան:* Բ հատոր, Ե-Կ: Եր., Երևանի պետհամալսարանի հրատարակչություն, 688:
4. **Բաբայան Լ. Հ.**, (1964). *Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմությունը XIII-XIV դարերում, Եր.,* Հահպետհրատ, 601:

5. **Բլբուլյան Ա.,** (2011). *Նոր ռուս-հայերեն բառարան,* Եր., հեղինակային հրատարակչություն, 1070:
6. **Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան**. (1928). *Խաղբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ:* Պատմա հնագիտական ուսումնասիրություններ, Վաղարշապատ, 304:
7. **Գրիգոր Ակներցի**. (1954). *Պատմություն ազգին նեփրողաց,* Հարվարդ, Քեմբրիջ, 179:
8. **Գրիգոր Ակներցի**. (1974). *Պատմութիւն թաթարաց,* Երուսաղեմ, 80:
9. **Գրիգորյան Գ.Մ.**, (1981). *Սյունիքը Օրբելյանների օրոք:* Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 318:
10. *Դիվան հայ վիմագրության.* (1967). պրակ III, Վայոց Ձոր, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 428:
11. *Դիվանն հայ վիմագրության.* (1973). պրակ IV, Գեղարքունիք, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 527:
12. *Դիվան հայ վիմագրության.* (1982). Պրակ V: Արցախ: Կազմեց Ս.Գ.Բարխուդարյանը: Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 348:
13. *Դիվան հայ վիմագրության.* (1977). պրակ VI, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 332:
14. **Թորոսյան Խ.**, (1992). *«Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Ջաքարյան Հայաստանի պատմության սկզբնաղբյուր,* Եր., ՀԳԱ հրատարակչություն, 611:
15. *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ.* (1950). կազմեց **Լ.Ս.Խաչիկյան**, Եր., ՀՍՍՌ ԳԱ, հրատարակչություն, 758:
16. **Խաչիկ վարդապետ Դադյան.** (1913). *Նորագաւիտ մագաղաթեայ նօտրագիր ցուցակ Սաղմոսավանից մատենադարանի:* «Շողակաթ», Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 219:
17. **Կարապետ եպիսկոպոս.** (1914). *Նյութեր հայ մելիքութեան մասին:* Բ պրակ, Դոփեանք եւ Մելիք Շահնազարեանք: Ս. Էջմիածին, տպարան Մայր Աթոռոյ, 233:
18. **Կիրակոս Գանձակեցի.** (1961). *Պատմություն Հայոց:* Աշխատասիրությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, Եր., ՀԽՍՌ ԳԱ հրատարակչություն, 428:
19. *Հայ եկեղեցու պատմութեան սկզբնաղբիւրներ.* (2007). Ա, Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը): Ս. Էջմիածին, 336:
20. *Հայ ժողովրդի պատմություն.* (1976). հտ. 3, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1032:
21. *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ.* (1984). ԺԳ դար, կազմեց **Ա.Ս.Մաթևոսյան**, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 988:
22. *Հայերէն բացատրական բառարան.* (1944). Կազմեց **Ստ.Մալխասեանց**: Հատոր 2, Ջ-Կ: Եր., Հայկական ՍՍՌ պետական հրատարակչութիւն, 512:
23. *Հայկական սովետական հանրագիտարան.* (1977). հտ. 3, Եր., 720:
24. *Հայկական սովետական հանրագիտարան.* (1984). հտ. 10, Եր., 736:
25. *Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան.* (1974). հտ. 2-րդ Կ-Մ: Կազմեցին՝ Ա.Մ.Սուքիասյան, Ե.Գ.Տեր-Մինասյան, Ա.Ս.Հակոատրյան, Հ.Հ. Կոստանյան: Գլխ.խմբագիր՝ Գ.Բ.Ջահուկյան, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 574:

26. **Ղազար Փարպեցի**. (1882). *Հայոց պատմություն: Թուղթ Վահան Մամիկոնյանին:* Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բագրատ Ուլուբաբյանի, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 540:
27. **Ղաֆադարյան Կ.**, (1948). *Հովհաննավանքը և նրա արձանագրությունները,* Եր., ԳԱ հրատարակություն 124:
28. **Մովսէսի Խորենացւոյ.** (1881). *Պատմութիւն Հայոց:* Տփխիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 417:
29. **Մակար եպս. Բարխուտարեանց**. (1999). *Աղուանից երկիր եւ դրացիք:* Արցախ, Ե., Գանձասար, 415:
30. **Մանանդյան Հ.**, (1977). *Երկեր,* հտ. Գ, ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Եր., 503:
31. **Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց**. (1842). *Սկզբագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն* Արարատայ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 293:
32. *«Նոր բառգիրք Հայկազեան լեզուի».* (1836). Երկասիրութիւն երից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան: Հատոր առաջին, Ա–Կ: Ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամին, 1140:
33. **Շահնազարյան Ա.Ի.**, (1990). *Վահրամյանների իշխանությունը, Եր.,* Հայաստան, 216:
34. **Պետրոսյանց Տ**., (2018). *Գիւղն որ կոչի Վարդենիս ի Նիգ գաւառի:* Վեպ: Եր., Հեղինակային հրատարակություն, 168:
35. **Պետրոսյանց Տ.**, (2023). *Զաքարե,* վեպ, Եր., Հեղինակային հրատարակություն, 515:
36. **Պետրոսյանց Տ.**, (2023). *Վաչուտյաններ:* Մենագրություն, հոդվածներ, Եր., Հեղինակային հրատարակություն, 558:
37. **Սուքիասյան Ա. Մ**., (2003). *Հայոց լեզվի հոմանիշների բառարան,* Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1237:
38. **Ստեփանոս Օրբելյան**. (1986). *Սյունիքի պատմություն, թարգմանությունը,* ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Եր., Սովետ. գրող հրատարակչություն, 616:
39. **Ուլուբաբյան Բ.**, (1975). *Խաչենի իշխանությունը X–XVI դարերում,* Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 454:
40. **Какабадзе С.**, (1926). Грамота груз. *царя Георгия III по поводу восстания князей Орбели в 1177г.* – Изв.КИАИ, т. IV, 148 с.:

Bibliography (Latin Script)

1. **Alishan H. GH.,** (1881). *Shirak,* Venetik, 192 ēj. **(in Armenian)**
2. **Aghayan Ē,B.,** (1976). *Ardi hayerei bats'atrakan bararan:* A-DH: Yerevan, «Hayastan» hratarakch'ut'yun, 929 ēj. **(in Armenian)**
3. **Acharyan Hr.,** (1973). *Hayeren armatakan bararan:* B hator, E-K: Yerevan, Yerevani pethamalsarani hratarakch'ut'yun, 688 ēj. **(in Armenian)**
4. **Babayan L.H.,** (1964). *Hayastani sots'ial-tntesakan patmut'yunĕ XIII-XIV darerum,* Yerevan, Haypethrat, 601 ēj. **(in Armenian)**
5. **Blbulyan A.,** (2011). *Nor rus-hayeren bararsn,* Yerevan, Heghinakayin hratarakch'ut'yun, 1070 ēj. **(in Armenian)**
6. **Garegin ark'episkopos Hovsep'yan.** (1928). *Khaghbakyank' kam Proshyank' hayots' patmut'yan mej:* Patmahnagitakan usumnasirut'yunner,Vagharshapat, 304 ēj.
7. **Grigor Aknerts'i,** (1954). *Patmut'yun azgin netoghats',* Harvard, K'embrij, 174 ēj. **(in Armenian)**
8. **Grigor Aknerts'I,** (1974). *Patmut'iwn t'at'arats',* Erusaghem,1974, 80 ēj. **(in Armenian)**
9. **Grigoryan G. M.,** (1981). *Syunik'ĕ Ōrbelyaneri ōrok',* Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun, 318 ēj. **(in Armenian)**
10. *Divan hay vimagrut'yan.* (1967). prak III, Vayots' Dzor, kazmets' S.G. Barkhudaryan, Yerevan, HSSR GA hratarakch'ut'yun, 428 ēj. **(in Armenian)**
11. *Divan hay vimagrut'yan.* (1973). prak IV, Geghark'wnik', kazmets' S.G. Barkhudaryan, Yerevan, HSSR GH hratarakch'ut'yun, 527 ēj**. (in Armenian)**
12. **Divan hay vimagrut'yan.** (1982). prak V, Arts'akh: Kazmets' S.G. Barkhudaryanĕ, Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun, 348 ēj. **(in Armenian)**
13. *Divan hay vimagrut'yan.* (1977). prak VI, kazets' S.G.Barkhudaryan, Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun, 332 ēj. **(in Armenian)**
14. **T'orosyan Kh.,** (1992). *«T'agakirneri patmut'yunn u govabanut'yunĕ» vorpes Zak'aryan Hayastani patmut'yan skzbnaghbyur,* Yerevan, HGA hratarakch'ut'yun, 611 ēj.
15. *Zhd dari hayeren dzeragreri hishatakaranner.* (1950). kazmets' L.S. Khach'ikyan, Yerevan, HSSR GA hratarakch'ut'yun, 758 ēj. **(in Armenian)**
16. **Khach'ik vardapet Dadyan.** (1913). *Noragawit magaghat 'eay nōtragir ts'uts'ak Saghmosavanits' matenadarani:* «Shoghakat'», S. Ējmiatsni hayagitakan zhoghovatsu, Vagharshapat, 219 ēj. **(in Armenian)**
17. **Karapet episkopos**. (1914). *Nyut'er hay melik'ut'ean masin:* B prak, Dop'eank' ew Melik' Shahnazareank': S. Ēchmiadzin, tparan Mayr At'oroy, 233 ēj. **(in Armenian)**
18. **Kirakos Gandzakets'i.** (1961). *Patmut'yun Hayots': Ashkhatasirut'yamb K.Mekik'-Ōhanjanyani,* Yerevan, HKhSR GA hratarakch'ut'yun, 428 ēj. **(in Armenian)**
19. *Hay ekeghets'u patmut'yan skzbnaghbiurner.* (2007). A, Yishatakaran Sanahnoy vanits' (Sanahini K'ēōt'ukĕ): S. Ēchmiadzin, 336 ēj. **(in Armenian)**
20. *Hay zhoghovrdi patmut'yun.* (1976). ht. 3, Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun, 1032 ēj.
21. *Hayeren dzeragreri hishatakaranner.* (1984). ZhG dar, kazmets' A.S. Mat'evosyan, Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun, 988 ēj. **(in Armenian)**

22. *Hayerēn bats'atrakan bararan.* (1944). Kazmets' St. Malkhaseants': Hator 2, Z-K, Yerevan, Haykakan SSR petakan hratarakch'ut'yun, 512 ēj. **(in Armenian)**
23. *Haykakan sovetakan hanragitaran.* (1977). ht. 3, Yerevan, 720 ēj. **(in Armenian)**
24. *Haykakan sovetakan hanragitaran.* (1984). ht. 10, Yerevan, 736 ēj. **(in Armenian)**
25. *Zhamanakakits' Hayots' lezvi bats'atrakan bararan.* (1974). ht.2-rd K-M: Kazmets'in` A.M. Suk'iasyan, E.G.Ter-Minasyan, A.S.Hakobyan, H.H. Kostanyan: Glkh. khmbagir` G.B. Jahukyan, Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun, 1974, 574 ēj**. (in Armenian)**
26. **Ghazar P'arpets'I.** (1982). *Hayots' patmut'yun: T'ught' Vahan Mamikonyanin:* Ashkharhabar t'argmanut'yunĕ ev tsanot'agrut'yunnerĕ Bagrat Ulubabyani, Yerevan, Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, 540 ēj. **(in Armenian)**
27. **Ghafadaryan K.,** (1948). *Hovannavank'ĕ ew nra ardzanagrut'yunnerĕ,* Yerevan, GA hratarakch'ut'yun, 124 ēj. **(in Armenian)**
28. **Movsēs Khorenatswoy.** (1881). *Patmut'iun Hayots':* Tp'khis, tparan Yovhannu Martiroseants', 417 ēj. **(in Armenian)**
29. **Makar eps. Barkhutareants'.** (1999). *Aghuanits' erkir ew drats'ik':* Arts'akh, Yerevan, Gandzasar, 415 ēj. **(in Armenian)**
30. **Manandyan H.,** (1977). *Erker,* ht. G, Yerevan, HSSH GA Patmut'yan institute, 503 ēj. **(in Armenian)**
31. **Yovhannēs episkopos Shahkhat'uneants'**. (1842). *Storagrut'iun Kat'ughikē Ēchmiatsni ew hing gawarants'n* Araratay: Mayr At'or Surb Ēchmiatsin, 293 ēj . **(in Armenian)**
32. *«Nor bargirk' Haykazean lezuwi».* (1836). Erkasirut'iunerits' vardapetats' H.Gabriēli Awetik'ean, H. Khach'atroy Sēiurmēlean, H. Mkrtch'i Awgerean: Hator arajin, A-K: I Venetik, I tparani Srboyn Ghazaru,yamin, 1140 ēj . **(in Armenian)**
33. **Shahnazaryan A.I.,** (1990). *Vahramyanneri ishkhanut'yunĕ,* Yerevan, Hayastan, 216 ēj. **(in Armenian)**
34. **Petrosyants' T.,** (2018). *Giughn vor koch'i Vardenis i Nig gavari:* Vep: Yerevan, Heghinakayin hratarakch'ut'yun, 168 ēj. **(in Armenian)**
35. **Petrosyants' T.,** (2023). *Zak'are,* vep: Heghinakayin hratarakch'ut'yun, Yerevan, 515 ēj. **(in Armenian)**
36. **Petrosyants' T.,** (2023). *Vach'utyanner:* Menagrut'yun, hodvatsner, Heghinakayin hratarakch'ut'yun, Yerevan, 558 ēj. **(in Armenian)**
37. **Suk'iasyan A.M.,** (2003). *Hayots' lezvi homanishneri bararan,* Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, Yerevan, 1237 ēj. **(in Armenian)**
38. **Step'anos Ōrbelyan.** (1986). *Syunik'I patmut'yun,* t'argmanut'yunĕ, neratsutyunĕ ev tsanot'agrutyunnerĕ' A.A. Abrahamyani Yerevan, Sovet grogh, 616 ēj. **(in Armenian)**
39. **Ulubabyan B.,** (1975). *Khach'eni ishkhanut'yunĕ X-XVI darerum,* Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun, 454 ēj. **(in Armenian)**
40. **Kakabadzje S.,** (1926). Gramota gruz. *carja Gjeorgija III po povodu vosstanija knjazjej Orbjeli v 1177g.*-izv. KIAI, t. IV, 148 s. **(in Armenian)**